«ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

3905, ՀՀ ք.Դիլիջան, Պարզ լճի 5, 24/1, 26/1
հեռ. +374 (060)71-30-00, (060)71-30-30

N 08-22

ք. Դիլիջան «31» հունվարի 2022թ.

«Գիպար» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 04232687)
տնօրեն Ա. Արտաշեսյանին
Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, Այնթապ 5շ. 19 փուն
էլ. հասցե՝ gipar7@mail.ru, հեռ.՝ +37477344449

Հայտնում ենք, որ «Գիպար» ՍՊԸ-ի և «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի միջև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա 2022թ.-ի հունվարի 5-ին կնքված N ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14-1 գնման պայմանագրի համաձայն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում «Գիպար» ՍՊԸ-ն պարտավորվել է մատուցել սննդի պատրաստման և մատուցման ծառայությունը:

10.01.2022թ.-ին «Գիպար» ՍՊԸ-ին պատշաճ ծանուցվել է N ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14-1 գնման պայմանագրին կից համաձայնագիր կնքելու առաջարկը և համաձայնագրի նախագիծը, սակայն «Գիպար» ՍՊԸ-ն չի ստորագրել համաձայնագիրը և 27.01.2022թ. ներկայացված N 2022/01-03 գրությամբ հրաժարվել է պայմանագիրը կատարելուց:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը 2022թ. հունվարի 31-ից միակողմանիորեն լուծել է N ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14-1 գնման պայմանագիրը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ընկերությունից կգանձվի պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 375 (երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամի չափով, և որակավորման ապահովումը՝ 1125 (մեկ հազար մեկ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամի չափով:

ՏՆՕՐԵՆ՝ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ